

Միջեր COVID-19-ի Պատվաստանյութերի Վերաբերյալ

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Միջ 1. Պատվաստանյութը մշակվել է շատ արագ. Չեմ կարծում, որ բավարար տեղեկություններ կան դրա մասին:

Փաստերը՝ Այդ պատվաստանյութերը կարող են պատրաստվել արագ ու լինել ապահով երեք պարզ պատճառներով՝

- Նախքան վիրուսի ի հայտ գալը կատարվել են COVID-19-ի պատճառ հանդիսացող վիրուսի տեսակի բազմաթիվ հետազոտություններ: Այսպիսով, գիտնականները մեծ առավելություն ունեին պատվաստանյութի տեսակն ընտրելիս, որը լավագույնս կպայքարեր վիրուսի դեմ:
- Կառավարության կողմից մեծաքանակ գումարներ են ծախսվել, որպեսզի ընկերություններն աշխատեն այս պատվաստանյութի ուղղությամբ և իրենց բոլոր գիտնականներին շուրջօրյա աշխատեցնեն այդ պատվաստանյութի մշակման համար: Դա օգնեց արագացնել գործընթացը:
- Չնայած, որ պահպանվում էին նոր պատվաստանյութի ստեղծման և դրա անվտանգության երաշխավորմանն ուղղված բոլոր քայլերը՝ որոշ քայլեր արվում էին միաժամանակ՝ մեկը մյուսին հաջորդելու փոխարեն: Դա նման է մեկ ուտեստի մի քանի բաղադրիչներ միաժամանակ պատրաստելուն՝ քայլ առ քայլ դրանք պատրաստելու փոխարեն: Այն ավելի արագ է պատրաստ լինում, սակայն նույնքան լավն է:

Փաստորեն, COVID-19-ից պաշտպանվելու համար հաստատված երկու պատվաստանյութերը փորձարկվել են ավելի քան 70,000 կամավորների՝ ներառյալ չափահաս տարիքի բոլոր անձանց և տարբեր ռասայական և էթնիկական խմբերի նկատմամբ, և պարզվել է, որ դրանք շատ լավ են գործում և հավասարապես անվտանգ են բոլորի համար:

Միջ 2. COVID-19-ով վարակվող մարդկանց միայն 1%-ն է մահանում: Արդյո՞ք պատվաստանյութը չի սպանի ավելի շատ մարդկանց, քան վիրուսը:

Փաստերը՝ COVID-19-ը մահացու հիվանդություն է: Սեզոնային գրիպը կարող է շատ վտանգավոր լինել, սակայն այն սպանում է յուրաքանչյուր հազար վարակված մարդկանցից մեկին, մինչդեռ COVID-19-ը սպանում է վարակված հարյուր մարդկանցից մեկին: Ոչ ոք չի մահացել հաստատված երկու պատվաստանյութերից:

- Որոշ մարդիկ մտածում են, թե արդյո՞ք դա կարող է լինել միայն այն պատճառով, որ պատվաստանյութերի փորձարկումներին մասնակցած կամավորներին բավական ժամանակ չեն հետևել, որպեսզի մենք իմանայինք արդյոք մահվան դեպքեր կլինեն: Ճշմարիտ է այն, որ մենք ունենք այս պատվաստանյութերը ստացած մարդկանց հետևելու ընդամենը 3 ամսվա փորձ, սակայն մենք ունենք ուրիշ պատվաստանյութերի հետ կապված փորձ, և բացասական ազդեցությունների ճշող մեծամասնությունը դրսևորվում է ժամերի կամ օրերի ընթացքում: Որևէ հիմք չկա կարծելու, թե այս դեպքում մենք այլ բան կտեսնենք:

Միջ 3. Պատվաստանյութը կարող է COVID-19-ով հիվանդանալու պատճառ դառնալ:

Փաստերը՝ Ներկայիս պատվաստանյութերը չեն պարունակում վիրուսը որևէ տարբերակով՝ ոչ կենդանի վիրուս, ոչ թուլացված վիրուս, ոչ մահացած

Միֆեր COVID-19-ի Պատվաստանյութերի Վերաբերյալ

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

վիրուս: Դուք պարզապես չեք կարող ձեռք բերել հիվանդությունը պատվաստանյութից:

- Որոշ այլ պատվաստանյութեր օգտագործում են այն վիրուսը, որի դեմ որևէ տարբերակով պայքարում են, որպեսզի ուժեղացնեն իմունային համակարգի արձագանքը: Ներկայիս COVID-19-ի պատվաստանյութերն այդ կերպ չեն գործում, հետևաբար ոչ մի կերպ չեն կարող ձեզ փոխանցել COVID-19-ը:
- Հնարավոր է հիվանդությունը ձեռք բերել պատվաստումից հետո առաջին մի քանի օրերի ընթացքում՝ նախքան պատվաստանյութը հնարավորություն կունենա գործելու, և դա չի նշանակում, որ դուք հիվանդացել եք պատվաստանյութի հետևանքով: Շատ մարդկանց դեպքում պատվաստանյութին անհրաժեշտ է 7 օր, որպեսզի այն սկսի գործել: Եվ այս երկու պատվաստանյութերն էլ պահանջում են երկրորդ չափաբաժինը՝ նախքան անձը լիովին պաշտպանված կլինի վիրուսով հիվանդանալուց:

Այս ամենում հեշտ է շփոթվելը, քանի որ պատվաստանյութը ստանալուց հետո որոշ ժամանակ կարող եք որոշակի կողմնակի բարդություններ ունենալ: Իրականում այս պատվաստանյութերը փորձարկած կամավորների մոտավորապես կեսի մոտ որոշակի կողմնակի բարդություններ են առաջացել. այդ բարդությունների մեծ մասը եղել է մեղմ և չի պահանջել որևէ բուժում կամ փոփոխություն առօրյա գործունեության մեջ և տևել է 1-2 օր: Այն, ինչ նրանք զգացել են, COVID-19 չի եղել՝ ոչ նույնիսկ COVID-19-ին բնորոշ մեղմ դեպք: Նրանք զգացել են իմունային համակարգի արձագանքի ախտանիշները, ինչը նշանակում է, որ պատվաստանյութը գործել է՝ ստեղծելով հակամարմիններ նրանց COVID-19-ից պաշտպանելու համար:

Միֆ 4. Այս պատվաստանյութերն օգտագործում են գենետիկական նյութ վիրուսի դեմ պայքարելու համար: Դա նշանակում է, որ նրանք կարող են ազդել մեր գեների վրա:

Փաստերը՝ Այս պատվաստանյութերն, այո, օգտագործում են իՌՆԹ (mRNA) (ինչը նշանակում է <<ինֆորմացիոն>> ՌՆԹ) կոչվող գենետիկական նյութը վիրուսի դեմ պայքարելու համար, սակայն դա որևէ կերպ չի անդրադառնում մեր գեների վրա:

- Ինչպես անունն է ասում՝ իՌՆԹ-ն գործում է որպես <<ինֆորմացիոն>> սուբյեկտ: Այս դեպքում պատվաստանյութում օգտագործված իՌՆԹ-ն ձեր մարմնին կարգադրում է արտադրել սպիտակուց, որը կգործարկի ձեր իմունային համակարգը: ԻՌՆԹ-ն թույլ է տալիս ձեր մարմնին հաղորդագրություն ստանալ վիրուսից՝ առանց անմիջապես վիրուսի հետ շփվելու:
- Սակայն դա չի ազդում ձեր գեների վրա: Հաշվի առեք, որ դուք մշտապես առնչվում եք այլ բույսերի և կենդանիների գենետիկ նյութի հետ, երբ դրանք ուտում եք: Ձեր մարմինը դրանք բաժանում է իրենց հիմնական քիմիական բաղադրիչների՝ օգտագործելով դրանց մեջ պարունակվող սպիտակուցները, ճարպերը և ածխաջրերը՝ ձեզ էներգիա տալու և ձեր բջիջները գործարկելու համար:

Ինչպես կերակուրն ուտելը, այնպես էլ պատվաստանյութի միջոցով իՌՆԹ ստանալն ազդում է ձեր առողջության վրա, սակայն չի փոփոխում ձեր գեները



Միֆեր COVID-19-ի Պատվաստանյութերի Վերաբերյալ

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Կամ ձեր ԴՆԹ-ն:

Միֆ 5. Ասում են, որ մանկական պատվաստանյութերը կարող են առաջացնել աուտիզմ. արդյո՞ք այս պատվաստանյութերը չեն պարունակում վտանգավոր քիմիական նյութեր, որոնք կարող են լուրջ առողջական խնդիրներ առաջացնել:

Փաստերը՝ Բացարձակ ճշմարտությանը չի համապատասխանում: Մանկական պատվաստանյութերը վտանգավոր հիվանդությունների դեմ մշակված լավագույն և ամենամեծ վտանգ պաշտպանություններից մեկն են, և տվյալ պատվաստանյութերը նույնպես ստուգվել են անվտանգության տեսանկյունից:

- Նախ աուտիզմի հետ կապված վախի մասին - այն սկսվել է անգլիացի բժշկի կողմից, որը հետագայում պարզվել է, որ խարդախ է: Սուտը շարունակեց գոյատևել, քանի որ որոշ հայտնիներ գնում և օգտագործում էին դա: Արդյունքը՝ միլիոնավոր դուրսեր վատնվեցին ճշմարտությունը բազմիցս ապացուցելու համար (օրինակ, հետազոտություններից մեկի ընթացքում 8 տարի շարունակ ուսումնասիրվել է Դանիայում ծնված յուրաքանչյուր նորածին երեխա, և արդյունքը ցույց է տվել, որ բացարձակապես կապ չկա): Նույնիսկ այդ դեպքում, որոշ վախեցած ծնողներ դեռ խուսափում են պատվաստանյութերից, և մենք ականատես ենք լինում հիվանդությունների մահացու բռնկումների, որոնք կարող ենք լիովին կանխել:
- COVID-ի պատվաստանյութերի բաղադրիչների ցանկը շատ պարզ է՝ իՌՆԹ (mRNA) գումարած՝ որոշ ճարպեր (որոնք կոչվում են «լիպիդներ», ինչը ճարպերը բնութագրող մեկ այլ բառ է), գումարած մի քիչ աղ և շաքարավազ՝ խառնուրդը կայունացնելու համար: Կարող եք գտնել բաղադրիչները COVID-19-ի պատվաստանյութի Մթերքի և Դեղամիջոցների Կառավարման [վեբ կայքում](#): Ոչինչ չէք տեսնի արտառոց:

Միֆ 6. Պատվաստանյութը պարունակում է միկրո չիպ, որը կարող է օգտագործվել իմ քայլերը վերահսկելու նպատակով:

Փաստերը՝ Պատվաստանյութը բացարձակապես չի պարունակում որևէ տեսակի հետապնդող (վերահսկող) սարքավորում:

- Այս պատմությունը տարածվել է համացանցում հիմնվելով մեկ Ֆեյսբուքյան գրառման վրա համաձայն որի Բիլ Գեյթսը մտադիր էր օգտագործել միկրոչիպ՝ նույնականացնելու այն մարդկանց, որոնք COVID-19-ի թեստ են հանձնել: Իրականում պարոն Գեյթսը մեկնաբանություն արեց հետազոտության շուրջ, որը ոչ մի կապ չունի COVID-19-ի հետ և որևէ կերպ չէր առնչվում պատվաստանյութերին: Հետազոտությունը վերաբերում էր մի մեթոդի, որի միջոցով հնարավոր էր իմանալ, թե ովքեր են պատվաստվել այն երկրներում, որոնք ունեն պատվաստանյութերի միջոցով կանխարգելվող հիվանդություններից մահացության բարձր ցուցանիշներ և առողջապահական վատ տվյալների համակարգեր: Աուտիզմի մասին պատմության նման, սա

Միջեր COVID-19-ի Պատվաստանյութերի Վերաբերյալ

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Նույնպես մի պատմություն է, որը դժվար է դադարեցնել՝ նույնիսկ այն բանից հետո, երբ այն կրկին և կրկին հերքվել է:

Միջ 7. Պատվաստանյութը առաջարկվում է մարդկանց ճնշման գործադրմամբ՝ հակառակ իրենց կամքի:

Փաստերը՝ Պատվաստանյութը ստանալն ամբողջովին կամավոր է: Բժիշկները և հանրային առողջապահության պատասխանատու անձինք փորձում են մարդկանց տրամադրել այս պատվաստանյութերի անվտանգության և արդյունավետության վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ, որպեսզի նրանք կարողանան տեղեկացված որոշում կայացնել, երբ պատվաստանյութն առաջարկվի իրենց: Ոչ ոք պարտավորված չէ պատվաստվել:

Միջ 8. Զի կարելի վստահել այս պատվաստանյութերը ստեղծող անձանց: Big Pharma – այն անձինք, որոնք մշակել են այս պատվաստանյութերը պարզապես ցանկանում են գումար աշխատել և վճարում են բժիշկներին, որպեսզի նրանք հայտարարեն, որ իրենց արտադրանքներն անվտանգ են:

Փաստերը՝ Թեև կան սարսափելի օրինակներ, որ դեղամիջոցներ արտադրող ընկերությունները շահույթն ավելի բարձր են դասել անվտանգությունից (օրինակ՝ վճարականոթեն փորձել են առաջ տանել ուժեղ կախվածություն առաջացնող օփիոդային ցավազրկողները), այս պատվաստանյութերի մշակման և արտադրանքների պատրաստման գործընթացն ինքնին եղել է հստակ՝ անկախ գիտնականների համար ավելի շատ տեղեկությունների հասանելիությամբ, քան երբևէ:

- Այս պատվաստանյութերի մշակումն իրականացվել է հանրության աչքի առջև: Իրականում, պատվաստանյութերի անվտանգության և արդյունավետության վերաբերյալ ակնարկները (տեղմին, որը նշանակում է, որ պատվաստանյութերը գործում են) հրապարակվել են, որպեսզի բոլորը կարդան: Դա նշանակում է, որ դուք կամ ձեր բժիշկը կարող եք կարդալ ակնարկները և որոշել՝ արդյոք հետազոտությունը հիմնավոր է թվում, և արդյունքները՝ վստահելի:
- Հետազոտությունը վերանայող անձանց շրջանակն ընդգրկում է բժշկական առաջնորդների՝ ամբողջ աշխարհի տարբեր բուժհաստատություններից և դիտորդների (չքվեարկող անդամներ), որոնք ներկայացնում են բժշկական խմբերի լայն շրջանակ՝ ներառյալ այն խմբերը, որոնք ծանր պայքար են մղել բժշկական ռասիզմի դեմ: Նրանք չեն վճարվել այս աշխատանքի համար. նրանք ներգրավվել են, որպեսզի ստուգեն հետազոտության որակը և հավաստիանան, որ հետազոտության ամբողջ ընթացքում պաշտպանվել է արդարությունը: Ստուգողների անունների ցանկի և նրանց աշխատատեղերի համար այցելեք [Վարակազերծման Պրակտիկայի Խորհրդատվական Կոմիտեի \(ACIP\) վեբ կայքը](#): Կարող եք իմանալ ավելին այս մարդկանց մասին՝ նրանց փնտրելով առցանց:
- Բժիշկները լրացուցիչ գումար չեն ստանում պատվաստանյութեր տրամադրելու համար: Նրանք վճարվում են բժշկական այցի՝ ինչպես նաև առաջնային բուժօգնության ցանկացած այլ այցի համար:

Միֆեր COVID-19-ի Պատվաստանյութերի Վերաբերյալ

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Միֆ 9. Պատվաստանյութը ստանալու համար առանձնացվում են Սևամորթների և Լատինական (Latinx) համայնքները, քանի որ այս դեպքում պատվաստանյութի անվտանգությունն ապացուցված չէ:

Փաստերը՝ Անշուշտ, կան պատմական փաստարկներ, որոնք Սևամորթների և Լատինական համայնքներին հիմք են տալիս վախենալու առանձնացված լինելուց: Մտահոգությունն արդարացված է, քանի որ մաշկի այլ գույն ունցող մարդիկ ու մարգինալացված խմբերը նախկինում հարկադրվել և ենթարկվել են դեղամիջոցների փորձարկումներին և բժշկական գործընթացներին՝ առանց տեղեկացված համաձայնության, հիվանդների պաշտպանության կամ էթիկական պրակտիկայի: Սակայն սա այդ դեպքը չէ: Պատվաստանյութը ստանալու համար առանձնացված չեն Սևամորթների և Լատինական համայնքները: Սակայն խմբերին պատվաստանյութ է առաջարկվում՝ ելնելով տվյալ խմբի անձանց համար վտանգներից: Այսպիսով, պատասխանը ՈՉ է՝ որևէ մեկին առանձնացնելու հարցի համար, սակայն ԱՅՈ է այն հարցի շուրջ, որ Սևամորթների և Լատինական համայնքներին հնարավոր է պատվաստանյութերն առաջարկվեն ավելի շուտ, քան մյուս համայնքներին, որտեղ վարակների, հոսպիտալացման և մահացության ցուցանիշներին այդքան բարձր չեն եղել:

Մտածեք հետևյալի շուրջ՝

- Այս պահին հասանելի երկու պատվաստանյութերը փորձարկվել են տարբեր մարդկանց վրա: Իրականում ջանքեր են գործադրվել՝ ապահովելու Սևամորթների և Լատինական կամավորների համաչափ ընդգրկումը փորձարկումներին՝ բնակչության շրջանում նրանց ընդգրկման հարաբերակցությանը համահավասար՝ պարզապես վստահ լինելու համար, որ չկան գործոններ, որոնք պատվաստանյութը կդարձնեն պակաս արդյունավետ կամ պակաս անվտանգ այդ խմբերից որևէ մեկում: Մեծ ջանքեր են գործադրվել այդ խմբերի անդամներին ներգրավելու համար՝ հավաստիանալու, որպեսզի նրանք չդառնան բժշկական անտեսման զոհ, որը բժշկական ռասիզմի հետ կապված մետաղադրամի մյուս կողմն է:
- Պատվաստվելու համար առաջնային գերակայություն, այս պահին, երբ պատվաստանյութերը հասանելի են, ունեն առողջապահության առաջնային գծի աշխատողները: Սա ներառում է հիվանդանոցի անձնակազմը՝ բժիշկներին, բուժքույրերին և թերապևտներին, ինչպես նաև այն մարդկանց, որոնք աշխատում են այլ տարածքներում՝ ինչպիսիք են լաբորատորիաները և հիվանդանոցների շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ծառայությունները: Նրանք առաջնային են, քանի որ նրանք ենթարկվում են վիրուսով վարակվելու ավելի մեծ վտանգի և շատ կարևոր դեր ունեն այլ մարդկանց կյանքը փրկելու գործում: Այս նույն չափանիշներն օգտագործվում են որոշելու համար, թե ով է շարքում հաջորդը, քանի որ մենք պետք է առաջնահերթություն տանք որոշ մարդկանց պատվաստմանը՝ նախքան մյուսները, քանի դեռ պատվաստանյութերի մատակարարումը սահմանափակ է: Պատվաստանյութերի մեծաքանակ առկայության դեպքում, յուրաքանչյուր ոք, ով



Միֆեր COVID-19-ի Պատվաստանյութերի Վերաբերյալ

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

ցանկանում է պատվաստվել, պետք է հեշտությամբ հասանելիություն ունենա պատվաստանյութին:

- Սևամորթների և Լատինական համայնքների համար կա հիմնավոր պատճառ պահանջելու պատվաստումներին հավասար և վաղ հասանելիություն: Սևամորթների և Լատինական համայնքների բնակիչները՝ Բնիկ Ամերիկացիներին և Բնիկ Հավայացիներին զուգահեռ, ամենայն հավանականությամբ, կարող են վարակվել (հաճախ աշխատանքի կամ կենցաղային վատ պայմանների արդյունքում), վարակվելու դեպքում, ամենայն հավանականությամբ, կպահանջվի հոսպիտալացում և, ամենայն հավանականությամբ, կմահանան COVID-19-ից: Նրանք նաև հանդիսանում են այն համայնքները, որոնք առավել ծանր հետևանքների են բախվում, երբ հիվանդությունը նրանց գրկում է աշխատուժից: Եթե տեսնում եք գովազդային վահանակներ կամ լսում եք գովազդ, որը խրախուսում է Լոս Անջելեսի Սևամորթներին և Լատինական բնակիչներին ընտրություն կատարելու՝ ի օգուտ պատվաստմանը, դա արտացոլում է այս մտավախությունները: ԼԱ- ն ցանկանում է, որ առավել տուժածները ունենան հնարավորինս շուտ պատվաստման հնարավորություն:

ԼԱ- ի Սևամորթների և Լատինական բնակիչների համար վտանգները մեծ են: Խնդրում ենք հնարավորինս կարգալ պատվաստանյութերի մասին հուսալի աղբյուրներից և գրուցել լավ տեղեկացված մարդկանց հետ, որոնց վստահում եք՝ ձեր բժշկի, ձեզ ծանոթ գիտության ուսուցչի, դեղագործի հետ և խնդրեք նրանց պատասխանել ձեր հարցերին և մտահոգություններին: Ձեր հարցերը կարևոր են և արժանի են բանիմաց և վստահելի անհատների կողմից պատասխան ստանալու:

Միֆ 10. Ինձ անհրաժեշտ չէ պատվաստանյութը, եթե ես արդեն վարակվել եմ COVID-19-ով:

Փաստերը՝ Մենք չգիտենք, թե որքան է պահպանվում բնական իմունիտետը՝ իմունիտետ, որը մենք ձեռք ենք բերում հիվանդանալուց: Ինչպես նաև չգիտենք, թե արդյոք այն ամբողջական է: Եղել են մարդկանց երկրորդ անգամ վարակվելու մի քանի լավ-փաստագրված դեպքեր: Հետևաբար, անգամ, եթե դուք վարակվել եք COVID-19-ով և ապաքինվել եք, պատվաստանյութը օգտակար կլինի ձեզ համար: